

ՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ	հաւար
Տարեկան	12 Ժր
Վեցամսեայ	6 »
Սրբապատկանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի	հաւար
Տարեկան	3 շր.
Վեցամսեայ	1.50 »

Իրանացի սոյր սուրբին երեսին հաւար 40 ս. վսի վերջին երեսի հաւար 20 սակքիւ Է. Երեւանի անկի սակքիւներու հաւար 20 0/0 զեղչ կը շար:

ՇԱՐՋՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐ ՏՆՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին իր գրասէղի
Խմբագրութեան հաս-
ցիին

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպութեան հաւար
ձեռքի
(20 Ունթիւր)
Պուշկարիոյ հաւար
ձեռքի
(15 Ունթիւր)

Գրութիւնք եւ չեն տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԻՍՏԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՆԴԸ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԵՏԻ ԵՎ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անցեալ անգամ մենք հետեւեցանք Սարաֆովի ծրագիրներուն. այս անգամ քննենք Յօնչէվի ճանապարհորդութեան նպատակը: Զօրավար Յօնչէվ Սարաֆովի հակառակ կուսակցութեան զեկազարն է: Այսուամբումեան միջոցին մակեդոնական երկու կազմակերպութեանց միջև ունէ մերձեցում անկարելի եղաւ: Միայն տարբեր կուսակցութեան պատկանող խումբեր զիրար չի խանգարեցին: Յօնչէվ վնասակար կը հռչակէ ահաբեկչական այն միջոցները, զորս գործադրուեցան Երբրին կազմակերպութեան կողմէ Սէ. լանիկի շատ մը կէտերու վրայ ուժանակ էլուումը գործածելով: Բայց զօրավարը եւրօպական մամուլի մէջ այդ յայտարարութիւնը ընելէ առաջ պետք էր խորհնոր թշնամին ալ միջոցներուն մէջ խտրութիւն չի դնէր. թշնամին, որ իր տրամադրութեան տակ բանակներ, թիգանթներ ունի և ինքն է գրութեան տէրը, մինչդեռ մակեդոնացին իր բռնաբարուած իրաւունքներուն համար ինքնապաշտպանութեան է դիմած:

Հակառակ Սարաֆովի Յօնչէվ կը կործէ, որ ժողովրդային ընդհանուր պատամբութիւն մը կ'սրելի չէ առաջ բերել Մակեդոնիոյ մէջ. պէտք է հայրենակային կըռիւններով եւրոպան ստիպել որ միջամտէ, որովհետեւ առանց մեծ պիտութեանց միջամտութեան Մակեդոնիոյ անկախութեան երազը չի պիտի իրականանայ:

Զօրավարը համոզուած է, որ Միւրջըթէկի ծրագիրը պիտի հանդպի դժուարութեանց և երբէք չի պիտի իրականանայ, քանի որ բարենորոգումները գործադրելու ուժը չի յանձնուիր եւրօպացի բնդհանուր կուսակարգի մը և կը մնայ Հիւմի փաշայի ու իր պաշտօնեաներուն ձեռքը:

Ի՞նչ խոստացուած բարենորո-

գումները չի պիտի գործադրուին մակեդոնական կազմակերպութիւնները համոզուած են, զարնան անոնք նորէն պիտի բարձրացնեն պատամբութեան գործը: Յօնչէվ կը յուսայ, որ այս անգամ Բուլղարիա լոկ հանդիսատեսի մը դիրքէն դուրս գալով զինու զօրութեամբ պիտի միջամտէ ինչպստ Մակեդոնիոյ անկախութեան:

Իր Բէլգրադ եղած միջոցին զօրավարը տեսնուած է քաղաքական անձնաւորութեանց հետ և իմացած անոնց բուն նիւթը ապագայ դիրքը: Երբ սերպերը վըստահ ըլլան, որ Բուլղարիա ինքզինքան չի սահմանը ընդարձակելու ծրագիրներ, գարնան ծագելիք պատամբութեան մասնակցելու համար անոնք ամեն տրամադրութիւն ունին:

Բուլղարիոյ և Սերպիոյ մէջ կը վախճուի սովայն, որ պատերազմի մը միջոցին Մակեդոնիոն խաղաղեցնելու պատրուակին տակ Ռուսիա Բուլղարիոյ և Աւստրիա Մակեդոնիոյ մէջ թափեն իրենց զօրքերը ու ահա մըն ալ դուրս չելլեն: Բայց երբ Միւրջըթէկի ծրագիրը պարզ լին մնայ, այն ատեն Յօնչէվի կարծիքով, Բուլղարիա ստիպուած պիտի ըլլայ միջամտել առանց երկար խորհելու թէ վերջը ինչ կըլլայ: Եւ Մակեդոնացի յեղափոխականները ամեն միջոց ձեռք պիտի առնեն պատերազմը անխուսափելի դարձնելու համար:

Գործին զեկազարները հիմա զբաղած են զիւրապարտական շրջանները ուսումնասիրելու գործով:

Յօնչէվ Վլէնյայէն ուղղակի Լօնտոն մեկնեցաւ, անկէ պիտի երթայ Պետերբուրգ ու վերադառնայ նորէն Վլէնյայ, ուր նա զիւրապարտական շրջաններու հետ պիտի մտնէ հազորակցութեան զանոնք քանկախ Մակեդոնիոյ մը մտքին հետ հաշտեցնելու համար:

Շատ հաւանական է, որ գարնան Պալզանը վերածուի ընդար-

ձակ պատերազմի դաշտի մը: Յեղափոխականներու տենդոտ գործունէութիւնը արդէն անհանգիստ ըրած է Սոյլթանը և պետութիւնները: Այս վերջիններս եթէ Մակեդոնացիներուն տրդար և չնփուտոր պահանջներուն գոհացում չտան, ապագայ ծանր դրութեան պատասխանատուութիւնը կը մնայ իրենց վրայ: Անոնք պիտի ջանան այդ ծանր պատասխանատուութեան խոստովելու: Հազիւ թէ...

Մարգարէտեանի
ԳԱՂԱՔԱՐԻ ՄԱՐՏՈՒՄ
Պետրոս Սերաֆիմովի յիշատակին
ԿՈՒՒՐ:

Քարոտ, լայն ճանապարհով վայրն շարժում էր ծանր իր մեքանիզմներով. քաջ տալով իր ետեւից և պաշտպանութեան համար վերցրած զօրքերի մի յիսնակի Գիշերայ շուայտանքից, խնջոյքից գոհ նա դեռ պահում էր իր կրծքում հեշտանքի տպաւորութիւնը և առաւօտեան արեգակի արծաթափայլ շողերի տակ շոյում էր միտքը ու զուարճանում անդորր ու ինքնագոհ: Բացել էր թարմ առաւօտներից ասես ամենափայլունը, եւ ւակայն չգիտես ինչու անձայր տարածութիւնների վրայ, բնութեան այս արգաւանդ ու բուսաւէտ ծոցում լռել, մնջել էր մարդկային ծիծաղն ու խօսքը: Իրայն մերթ ընդ մերթ հեռու փշոտ թփի վրայ, նստած մենաւոր թռչնիկն էր իր կըչկըչոցով խզում ընդհանուր լռութիւնը, կամ խոսերի միջից թագնւած արտոյտը սարսափած վեր էր սլանում թրպրտալով: Աւազակ ու ոճրագործ սիրտը սակայն, պատած ճարպի հաստ շերտով կարող է զգալ մենաւորութեան, ամայութեան սըխուր զգացում, նա գոհ էր բոլորից եւ զով առաւօտից, եւ խոսքն ու ամայի ճանապարհից, եւ խնջոյքից: Այս վայրերում շատերը պիտի մի քանիսն իր համար միայն ծնին, ապրին, աշխատին, մեռնին: Ոճիրն ու արիւնը կարճ ժամանակում իսպստ են խեղդում բթացած հոգին:

Քաղաքը մօտ էր: Հեռուն սոցոս կերպով նշարուում էին անհամար մզկիթների գագաթները, լուսաւորւած, վաղորդեան ոսկեգոյն, կար-

միր ճառագայթներից: Սուր ամպերի արանքից յանկարծ ճաթող անսպասելի և ահաւոր կայծակի պէս խմբի խաղաղ գնացքը խանգարեց տասնեակ հրացանների միանագ որոտից: Վառօղի սուրից մի ամպ էր ասես բախեց վալու պաշտպան ոստիկանների և զինորների յիսնակին:

Մոխի ու շիւանի միջից սակայն պահաւ զէպի քաղաք առջեւից գնացող կառքը, յանկարծական մահից ահաբեկ անյայտացաւ նա առանց նրկատելու հասնող արաւիրքից, իր ետեւից թեթեւ փողու ամպ թողնելով միայն: Մի ակնթարթում ճանապարհը ծածկեց զիւրաքանդ և հոսեց սրիւնը. անողք կուր կնքեց իր կարմիր դրօշը անարգած հողը կրծքին: Մոխի միջից փայլում էին նոյնպէս կատաղութեամբ վառուած աչքեր, բարձրացած առնական քաղուկներ՝ խաղացնելով անընդատ ողի մէջ միշտ բարձր, միշտ սպառնալից՝ անհուն վշտից ու ուռչած կրծքերում կտակած վրէժից խօսող պողպատեայ փալփուռն գործիքները: Ամեն յաջող, մահացու հարած վրկարար պալսամի ազդեցութիւն էր գործում այս բուռն խիզախ քաջերի խոցած սրտերին և սաստկացնում սյրող ոգեւորութիւնը: Այժմ նրանք լոկ զիւրաքանդ մէջ էին թափառում մոլեգին, մահը գրկած կենդանի արարած փնտռում:

Յարձակման դեռ առաջին րոպէում կուրից խոյս տւած, մահից ճողոված տասի մօտ ձիւորներ մարդիկներից բաւական հեռու մի կէտում գիրք բռնած արդէն սկսել էին զնդակ տեղացնել զիւրաքանդ մէջ շարժող տասնեակին: Հայրենիների խումբը յաղթութեան երջանկութեամբ զովացած, գոհ այս գարկուում, նահանջեց թշնամու անթիւ դիւակի ելով պատած ու գաղջ արեամբ ուռզւած ճանապարհից դէպի քարքարոտ բարձունքը, վերցնելով իր հետ նախորդ գիշերայ վալու մեծարող ու հաճելի արարածին, զիւրաքանդ մէջ միակ կենդանի թշնամուն:

Նահանջող խմբից դէպ յառաջ շարժեց միայն մի հսկայ տղամարդ. կարծես կուր վախճանը բնորոշելու, քանդակելու հպարտ զիւրաքանդութեամբ: Անվեհեր Սօկոլովն էր, որ ժայռերին զարկւող վիրաւոր ինքնակորոյս առիւծի պէս նետեց թշնամու շարքերի մէջ և ընկաւ անկենդան, փռելով իր շուրջը նոյնպէս զիւրաքանդ: Այժմ պարզ էր կուր հետեւանքը բոլորի գործը, վախճանը:

Այդ հիմնագիծը դրեց նա իր մահով . գաղափարական անասն ընկերը . վեհանձն կեանքի վերջալույսով . Ընկաւ կողքից գնացող . մարտնչող անբաժան ընկերը . էլ ինչ կարող է սպասել միւսներին...

Արեւիկայի շրջակայքը : Անհաւասար պայքարներում : անարգ բռնաբարումներ : աւար-թաւանի վարժ բոլոր հոգիները թրթռացին դէպի նոր աւերած , նոր ոճիր Է Է ինք անգուցական քովերը պաշարեցին միայն հեռուից ահուգը թշուառ թիւններին պիղծ ներկայացուց շինեցով . որոնք անցկուցեցին քանակ իրանց տեղերում եւ սպասում էին խմբի մարտիրոսացումին :

Օրը մտ էր իր կէտին . Արեւը այժմ չէր տաքացնում , այլ ասեւ այրում , կիզում , սողորում : Երաշտ էր տիրում , սաստիկ ճաքեցնող երաշտ : Երկնքից կիզիչ ճառագայթներն ասեւ բոցերի հոսանքներ լինէին . երկիրը երաշտ . սոթ էր արտացոլում . կրակ էր թափում . սըփուում եւ քրտնաթոր հոյսուկներ խումբը . որպէս մահաբեր բոցերի , հրաշէկ գնդակների մի անգութ , անողջ հնոց : կրակ էր ընկնում երկնքից , երաւից ցնդում էին քարերն ու հողը , այդ բոլորում շիկացած երկաթով էլ մահ էր տարածում վրէժի ծով դարձած անխնայ կործար :

Քաղաքից հասաւ եւ գործը : Թըշնամու շրջան խառնում , բազմանում էր . իսկ գաղափարի հերոսները անփոթ կուռում էին երգելով : Դեհ , նամերա հոգին կարող է՞ ըմբռնել կուռ մէջ , դաճան . բայց գաղափարի մարտում հարգուկի սիրտը հեղեղը զգացմունքները : Թող բազմանայ թշնամին , մէկի դէմ թեզ հազարներ թափեն . ընկնեն...

Թաթուշու ու Կէորքը խմբի թիկունքն են պահպանում , ժպտուն ու ծանր , շափաւոր , դանդաղ միտքի նակովեմամբ դեռ որոտացնում հրացանները միամիտ զուտ չէ հասել , գնդակը սուրջով շոխկացնում է հողին մարդ կամ անասուն , մուխը պատել է հեռու շրջանակը , թշնամու բազմամարդ շրջան , պայթիւնը բռնել է արար-աշխարհ վերաւորների վայնասունը դեղդացնում է երկնքի խուլ կամարը : Պետան , անվեհեր Պետան , ուրախ է իր կողքում մարտնչող ու երգող Սվէասուլաի հետ . մի քանի քայլ անդին Օննիկը , բոլորը , բոլորը ժպտուն , մարտիրոսական անհուն բերկրանքով

պարտում : Հեռուից նկատեց եւ հեծեալուցը , կոխը աւելի սաստկացաւ : Թաթուշու արագացրեց գնդակների շոխկոցը , մուխը ծածկեց նրա աչքերի առաջը : Զիւարթների խուճրը խոյանում է դէպի նաւ , սակայն ինչու լոնց նրա հրացանը : Պետան իսկոյն նկատեց այդ : Թաթուշու մայրուած վայրկենաբար հետ նայեց , Էլի ժպտած . սակայն նրա ծիծաղում այժմ այնքան խոցող ծակող թոյն կար . Պետան հասկացաւ բոլորը , Թաթուշու անչուտ անիծում էր վերջին փամփուշտը , անիծում բոլոր նրանց որ զգացան նրան այդ եւ խօսում էր Պետանին , նրան ասում , յայտնում մի շատ պարզ գաղտնիք : Այն աչքերը , Թաթուշու նազանքոտ աչքերը , ինչպէս խօսել պատմել , վառել գիտնի նրանք . մանաւանդ ընկերով աչքերը , հայեացքը . Եղիան մտնեցաւ , հասաւ Թաթուշուին . եւ ահա նա վերկացաւ վերաւոր . իր լայն թիկունքով , իր ամբողջ հասակով ձգեց մի ակնխաթն մ անաղ արձանակը մեծին : Սովորով ինչպէս ընկաւ , նա զարկեց թշնամիների պատին . Ընկան մի քանի մարտիկներ , բնկաւ , փուկեց եւ նա . Այժմ շրջան տառջ էր գնում , անդում , նա շոտով կր խեղդէր , կը մաէր մահաւայ այդ կենտրոնը . Այժմ Պետան , դրդւած մի անտրոջ զգացումով . սկսեց հրացանի փողը ուղղել էր միայն մի կողմ եւ շարունակ , անդալաբար , տենդոտ ու գինեյոյզ . մոայլած խփում էր միայն մի կէտի վրայ : Թշնամու շրջան նրա հրացանի ուղղութեամբ պատուել էր . գնդակների մի տարօրինակ ճանապարհ էին շաց արել եւ զարկում էին շարունակ մարդկային դիակներին մի դեզի . բոլորի վերայ Թաթուշուի Մարտիկը թաղաւած էր թշնամու դիակներից կազմած այդ բլրի տակ : Ընկե՛րը բարձրացրել նըրան այդ արձանը , այդպէս էին խօսում , այդ էին պահանջում Թաթուշուի վերջին ժպտը , հայեացքը , նրա աչքերը...

Եղիան մտնեց էր , ընկերներից շատերը փուկ էին անկենդան . կամ վերաւոր տասնակ տեղերից : արիւնը լճակներ էր կազմել ամեն մէկի շուրջը . փամփուշտները վերջացան , բազուկները թուլանում էին աչքերի առաջ միմեանում էր , արեգակը այրում , քարերը ճաթում . նա ցնցեց ամբողջ մայմեով , էլի մի քանի տեղերից վէրքեր... նա սթմ

նկատեց միայն , թէ ինչպէս բոլորի միջից , հասնող թշնամու առաջ այս անդամ բարձրացաւ Օննիկը իր գոգգոջ ձեռներում բռնած գոյգ տարածա նակներ . արիւն կաթմում իր պլիսից թիկունքից , թեւից եւ... մոայլեց միջնացաւ , չքացան պատկերները...

Այժմ մահայ գալուկը նստել էր ամբողջ մարտի գոշաի վրայ . Արեգակը աւելի կիզիչ ճառագայթներ էր արձակում ու գոլորշիացնում գաղափարի մարտիրոսների թարմ արեան լճակներ , գոլորշիացնում ու բարձրացնում վեր . վեր... փափկիկ զ՛ի րեւն էլ նրանց շող էր ապիս մոտակայ կենդանութեան գերեզմանի-բանտի-ու շրջալուսանների վրայ , ամբողջ հարստահարածների , աւերակների վրայ...

Էմիլ Եղարշեանց

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թշնամու , 8 նոյեմբերի .— Արեւն սագործութիւնը Պարսկաստանում չի զարգանում—ահա՛ նամակիս նիւթը . ին սկէտք է բացատրեմ , թէ ի՞նչու Պարսկաստանում անհասարայ արհեստները չեն ծաղկում ու կատարելագործում :

Յայտնի է որ արհեստների յատաղ-գիտութեան ու կատարելագործման մէջ գլխաւոր դերը կատարում են վիտուսները . ուսումը , որովհետեւ նրանք զարգացնելով ու յղկելով արհեստները ճաշակը , միաժամանակ զարգացնում ու կոկում են նրա ձեռքի աշխատութեան արդիւնները . հետեւապէս ճաշակաւոր ու հիանալի արդիւնքներ արտադրում է այն արհեստը , որը գտնուում է զարգացած , ուսում առած . գիտութիւնից հասքաւած . թէկուզ շատ քիչ արհեստաւորի ձեռքում : Դրանում տարակոյտ չկայ : Եթէ զարգացնան այս բնական ուղիով առաջ շրջանաւար արհեստը լուսաւորեալ երկրներում , այսօր եւրոպան չէր կարող տալ մեզ իր ցարգ տուած ապրեցողիչ ձեռակերտ իրերը :

Իայց դժբաղդաբար շատ փշոտ ճանապարհ է ընտրել իւր համար պարսկաստանում արհեստը : Մի անգամ որ ընկել է տգիտութեան ճանկը , խաւարի գոգը , դարձել է այնուհետեւ մի կատարեալ գորդան հանգոյց եւ միանգամայն անհնարին է դարձնել իւր լուծումը : Ի՞նչու նա հեշտութեամբ լուծու էր եւ հեշ-

տութեամբ էլ կարողանար գտնել զարգացման ճանապարհը . եթէ ներկայ արհեստաւոր գաւազարը հնալուստութիւն ընձեղէր քիչ թէ շատ ուսում ստացած . որիմն եւ ճաշակաւոր պատանիների արհեստներին մերձեցաւ :

Ներկայումս պարսկաստանի թէ հայ եւ թէ օստրալի գրագիտների ընթացաւարտները չեն ստանում հիմնական դաստիարակութիւն ու զարգացում , չետեւարար արհեստը չէ ծաղկում ու յատաղալուծում պարսկաստանում :

Իսկ զարգացաւարտներից շատերը գուրկ լինելով նիւթական միջոցներից եւ չունենալով հնարաւորութիւն շարունակելու կամ մի որ եւ է ոչ-տաւէտ արհեստ սովորելու , լայն ճանապարհ են հարթում դէպի գործակատարութիւնը , հաշուապանութիւնը եւ պէս պէս ծառայութիւններ : Պարսկաստանի վաճառականներն էլ ըմբռնած լինելով այդ եղելութիւնը , օգտուում են հանգամաքից եւ կատարել են տալիս իրենց մոտ ծառայողներին խառնութիւն վերարեբեալ ազգի-ազգի ծառայութիւններ , եւ այդպիսով նա ստանձնում է իրեն ալ սիրելի պաշտօն եւ այն փոքր ի շատէ գիտութիւնը որ ձեռք էր բերել զպրոցում միանգամայն մոտացութեան է տալիս , եւ եթէ ցանկանայ մի որ եւ է արհեստ սովորելու անկարող է :

Աշակերտներից քրեթէ ոչ ոք հետամուտ չի լինում արհեստ սովորելու ու ձեռք բերելու , որովհետեւ արհեստաւորներն մոտացում 4 տարւայ կուրսը 8-10 տարում են համաձայնում անցնել նոցա հետ . իսկ զարգացող դուրս գալուց յետոյ էլ տասն երկար ու ձիգ տարիներ տեղիտ արհեստաւորին աշակերտութիւն տանել առանց այդ էլ այս թանկ տարիներում ծնողներին նիւթական օգտութիւն տեսնելու այդ էլ մի բան չէ . դա այնպիսի մի անխնամ քայլ է որ ներկայ ժամանակներում դժուար թէ խնջը գլխին մի հայր սփալի իր որդուն անել : Մնում է անձար ու անգլաւ մարդիկ յանձն առնեն արհեստաւորների ծանրաշիւղ պայմանները ընդունելու միջին ապագայում մի փրակի սէր գտնալու գիտաւորութեամբ : Այսպէսով ուրե՛ս արհեստները Պարսկաստանում վիճակի փոփոխութիւն չեն կրում , այլ մի ազգային ձեռքից պարբերաբար անցնում են միւս աւելի սղէտի ձեռքը :

Եւ նոյն իսկ ներկայ ժամանակներ

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

ՆՈՒԷՐ Ս. Զ. — Ին ԳԼՈՒԽ Դ.

Արշակը , որ իօսակցութեան միջոցին լուռ ու մուռջ էր եւ միայն դէմքի շարժումներով էր իր կարծիքները , այսինքն հաւանութիւնը կամ բացասումը արտայայտում խօսողների արտայայտած մտքերի մասին . կարծես այլեւս ինքզինքը զգուցի չը կարողանալով իօսակցութեանը միջամտեց կենդանի բարբառով .

—Նախ կասեմ որ Մարկոսովի կարծիքները ճիշտ են , երկրորդ որ Գրիգորովը շարաշար լիալուծում է , երբ Եւստակիոսն ու իր ընկերներին անագնիւ , փառասէր մարդիկ է ուզում ներկայացնել : Գրիգորովի կողմից

ուղղամտութիւն չէ նաեւ հայ յեղափոխութեան պարագլուխներին իրրեւ ձրիակներն ներկայացնելը , որովհետեւ այդ մարդիկը ոչ միայն ձրիակներն չեն , այլ իրենց անխնայ աշխատութեան պատճառով որը ներկված է հայ ժողովրդին , խորտակել են եւ իրենց սպասան : Եւստակիոսը , Պետրոսը եւ իրենց այն սակաւթիւ ընկերները , որոնք այսօր աշխարհի հեռաւոր անկիւններում դեզերելով իրենց ամբողջ եռանդը եւ ուժը ներքիլ են հայկական դատին , շատ ընդունակ եւ կարող մարդիկ են ու եթէ ժամանակին չը նետվէին յեղափոխական ալիքի մէջ , անուրբ իրենց ետեւից շարժէին , սովորական կեանքին երբեմն վերադառնալու . Նրապատակով , այսօր շատ ու շատ լաւ դիրքերի տէրեր կը լինէին :

Ես չեմ կարող սյգ պարունակի արժանիքները ուրանալ , միայն այն

պատճառով որ նրանք սկսեցին ինձ արհամարհել իմ նասէժաւայի հետ նըշանախօսութիւնից յետոյ : Մանաւանդ երբ ինձ լաւ յայտնի է որ այդ արհամարհանքը , ոչ այնքան ուսուսողիկայ հետ նշանակելու համար է , որչափ որ իմ տաժ խոստումը դրժելը : Ես խօսք էի տուել գնալ Տաճկաստան լըրեւ յեղափոխական ազիտատոր եւ դրա փոխարէն նշանակելի ու նատէժաւայի փեշերի տակ նստելը գերազանցել :

—Ուրեմն զղջացել ես , վիրաւորվածի կերպարանք ընդունելով ու աչքերը կրակին տալով միջամտեց նասէժաւայ Պարսկան :

—Անկեղծօրէն , ես էլ չը զիտեմ , իր փարթամ մազերը թափահարելով պատասխանեց Արշակը : Այս քափը միայն ինձ համար որոշ է . որ մեր այս քայլով ես ընկայ ոչ այնքան փայլուն դրութեան մէջ , ընկերա

կան եւ զաղափարական տեսակէտից դատելով իմ քայլը իր խօսքը յարգել գիտցող սղամարդի քայլ չէր : Ուրիշ ինչիդ թէ ես հիմա անհաստպէս աւելի երջանիկ եմ զգում ինձ , որովհետեւ քո սէրն եմ վայելում :

—Էհ , եթէ այդպէս լաւ չես զգում քեզ , աւելի վերաւորված ու ըրթունքները սեղմելով աւարկեց նասէժաւայ , կրկին կարող ես ընկերներից սաժ խոստումը կատարել : Հաստացած եղիբ որ ես քեզ արթնեցնեմ հանդիսանայ :

—Աւաւորք եւ այդ խօսքերդ նասէժաւայ , գլուխը որբով շարունակեց Արշակը , դու էլ զիտես որ ես չը պէտք է կարողանամ քեզից բաժանել : Թող մարդ եմ : Ես այդ խոստովանում եմ . եթէ ես ուժեղ մարդ լինեմ , եթէ հայր ազատագրութիւնը ինձ համար քեզից աւելի գերադասելի լինի , դու արգելք հասն

բուժման շատ պատանիներ փոխանակ արհեստ սովորելու դիմում են գործակատարութեան, սակայն ցաւօք սրտի շուտով համազում են, որ այդ պէտքով զրկուում են իրենց անկախութիւնից եւ ինքնուրոյնութիւնից։ Տարիները գլորուում են եւ իրենք մընում են նոյն գործակատար, նոյն հլու հնազանդ, նոյն խեղճ թրաւունքից զուրկ գերի ստրուկ մարդը, եւ ոչ մի ապագայ չեն ունենում։ Ուստի եւ որպէսզի արհեստները պարսկաստանում ծաղկին ու կատարելագործուին եւ ունեն մի երիտասարդ ազատ ուրոյն ու անկախ գործ սկսի, ամենանպատակաւորմար այն է ներկայ ժամանակներում, քանի որ Պարսկաստանում հայերիս մէջ գնալով կրթութիւնը լայն ծաւալ է ստանում։ Եւ հետզհետէ դպրոցներ թիւր աւելանում է, լաւ կը լինէր եթէ այդ դպրոցներում կրթութեան, ուսման ու գիտութեան հետ զուգնթացաբար աւանդուէր նաեւ մի քանի արհեստներ, այնպէս որ կունենայինք կրթութեամբ եւ միաժամանակ հմուտ, արհեստներին լաւ ծանօթ ու տեղեակ մարդիկ։ Այն ժամանակ Պարսկաստանում արհեստը կը ծաղկէր ու կը յառաջանար ինչպէս եւրոպայում։

Կայծղունի

ՍԵՐ ԸՆԿԵՐԱԿԱՆՆԵՐԸ (1)

Երբ քննենք հին պատմութիւնները՝ պիտի տեսնենք որ մարդիկ իրարմէ անջատ ապրած, իրարմէ զատ կրօնքներ և օրէնքներ ստեղծած են և սիրած իրենց նմանները։ Հայերս ալ իրեն հին ազգ՝ անցնալով մէջ ունեցած ենք ազատ հայրենիք մը, թագաւորներ և գորականներ, բայց թէ ինչու՞ այսօր լատարուկ ենք, ասոր պատճառները պատմութիւնը կը պարզէ մեր առջեւ։ Անեղ կոտորածներու ժամանակ մենք թողով հայրենի աւերակներու մէջ մեր մայրն ու քոյրը, պարկը չալակինս հետացանք զէպի օտար հող, է՛հ, ի՞նչ ընէինք ամէն կողմ կրակ ու բոց, գոնէ կեանքերնիս ազատեցինք։

(Ժողովրդական պարզ դատողութեան իբրև նմոյք և անոր ցանկութեան իբրև արտայայտութիւն կը գնենք այս յօդուածը։

Ս. Մ.

Անցան տարիներ, օտարին հետ բարեկամացանք. բայց մոռցանք մեր հայրենիքն ու սիրելիները. — երբեք. այդ ստորնութիւնը չի գործեցինք. քիչ ժամանակէն ստեղծուեցաւ յեղափոխական հոսանք մը. բոլորն ալ սկսան կրազել Հայրենիքի ապագայ փառքը։ «Հայրենիքի սիրուն համար թո՛ղ զիս հանեն կախաղան» քնարը ձեռքերնիս կերպէինք ինքզինքիս աշխատանքներու մէջ կամ կարանտեանի խոտվայոյց ալիքները դիտելով և կամ Դանուբի եզերքին նստած. հայրենասիրական հոսանքը ստացաւ ծաւալ, Յատուկ եկան կազմակերպութիւններ։

Մարդ մը, որ խորհելու կարողութենէ զուրկ, անընդունակ է գաղափարները շօշափել լայն գէշէն զանադանել, բնականաբար աղբյուրին թշնամի կը համարուիս. բայց գաղափարներու տարբերութիւնն ալ մեր մէջ անելութիւն ցանկեց, տապալապալի խնդիրներ հանուեցան, կոխներ, եղբարասպանութիւններ. ասոնք բոլորն ալ պանծաւ դարձան որ հայրենեան ոչ ժողովրդականին։ Հասկանալի յեղափոխական առողջ գաղափարին տարածման, զեռ մեր մէջ կան ու կը մնան մարդիկ, որոնք կուրացած չեն տեսներ մեր կեանական շահերը և ընկերվարական հովիւր առած, մարդկութեան ապագայ ճաճանչալի հորիզոնը կը դիտեն, մինչ իրենց հորիզոնի վրայ աստղ մը իսկ չի փայլիր։ Այսպիսի վաղահաս ծաղիկներ լեցուն են Ռուսչուքի սօցիալիստ թերթին մէջ։

Ճիշտ է թէ ժողովուրդ մը յառաջագիւտու, իրականութեան պահանջած գաղափարներով օժտելու համար պէտք ունինք հրապարակագիրներու և պարտաճանաչ, լուրջ քարոզիչներու — և մենք ունեցանք այսպիսիներ — բայց ունեցանք նաեւ շատեր, որոնք պատճառ դարձան անոր գարթնող միտքերը շփոթելու, քան ճանչցնելու այն դառն իրականութիւնը, որու մէջ կայրինք։

«Քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն»։

Հայրենիքի մէջ մոռցուեցան մեր քոյրերն ու մայրերը, մեր սիրելի սրբափայտները, ի՞նչ եղան անոնք. ի՞նչ պայմաններու մէջ կայրին։ Իրարը կը յարձակի գիւղերու վրայ, կը կողոպտէ, կը զարնէ և սուսանքելով Մաթենիկն ու Շուշանիկը կը պղծէ, մեր ծեր մայրերը մերկ, աւե-

րակ ամն շէմին վրայ նստած կուլան իրենց սեւ օրերը։ Մեր երեխաները նոյնպէս մերկ, անօթի, ծարաւ. ակը ու սիրական չունին։ Հայրիկը հոն չէ. իսկ մայրիկը օրօրօրին մօտ նստած՝ անհուն վիշտերու տակ ընկճուած՝ մանկական օրօրներու տեղ սխորը մեղմալիներ կը յօրինէ, ի՞նչ կընենք մենք, Հայրենիքէն հեռու։ Մեզմէ մաս մը ընկերվարականութիւն կը քարոզէ, բայց այդ մեզ պէտք չէ, թող հայ բանուորը անգիտակ մնայ ընկերվարական գաղափարին, թող անոր սղջու ըսեն։ Միայն դարեւոր վրէժխնդրութիւնը բորբոքեցէք անոր մէջ, ան պատճառաւոր կողերի մէջ նախ թող փրկէ քրոջ պատիւը. թող վերաջինէ հայրենի կիսակործան տունը և երբ հայկական դրօշը ծածանի Մասիսի ձիւնապատ դազաթիւր, անոր ստուգի մէջ թող երբեք մարդու թեան երջանկութիւնը։

Նիսի մերկացնենք յիշատակական սուրբ, փրկենք Հայրենիքնիս և յետոյ սերկացնելով ընկերվարականութեան սուրբ փրկենք մարդկութիւնը։ Այ բաւական է անտարբերութիւնը, քանի զեռ չենք լսած մեր մօր և քրոջ անէջքը, չտուով հիասթափուինք և զինուած արդարութեան և վրէժխնդրութեան զէնքերով երթանք զէպի Հայրենիք ու մղենք ազատութեան կորուստ։

Կոնակ
27 նոյ. 1903
Սօֆիա

ՀՆՆԱԿԵԱՆ
ՔԱՅՔԱՅՈՒՄԸ
~*~
(Լուսօթի սեր քղրակցին)

Շար. (Ասխորդ քիւեկն և վերջ)

Մարդասպանին խորհրդաւոր անհետացումը անբացատրելի գայրոյթ յառաջ թերաւ հասարակութեան մէջ։ Մենք կը ցաւինք հոս անգամ մը եւս կրկնելու, որ հին Հնչակեանները խոհմութիւնը չունեցան օրինաւորութեան անհամեմատ մէջ Ալֆարիստեն. որու ոճիւրներուն զէմ ինքզինքներն պաշտպաններ։ Հին հնչակեան կեդրոնը չափէն աւելի յայտնութիւնները օտարին, յաճախ սուտերով չափազանցուած, եւ մենք տեսանք փորձով, որ ոչ թէ «Ալֆարիստենը»

տուժեցին, այլ եւ այնչափ ու անկէ աւելի Հայ Յեղափոխութիւնը, Հայ Յեղափոխութեան հակառակ թերթեր պատեհ առիթ գտան կրկին իրենց թոյնը թափել մեր դէմ, այստեղ «Սթանապուրտ» մասնաւորապէս փայլեցու։ Այնպէս որ հին հնչակեանները, որոնք նորերուն պէս կը պուսան ու կը ճշան յանուն յեղափոխութեան, որովհետեւ վայելին համակրութիւնը («») չամչցան ոստիկանական հարցաքննական առեանին առջեւ հետեւեալ յայտարարութիւնը բնել, «Մենք իրականապէս յեղափոխականներ չենք։ Եւ ասիկա վաւերական է։ Յիրաւի լաւ է իմանալ իրենց թերթին իրենց ինչ ըլլալը։ Բայց այդ ի՞նչ ստոր հաշիւ է, օտարին տէքր մտնելու եւ պզտիկ համակրութիւն մը շահելու համար ելլի զաղափարը ուրանալ. ոչ ապաքէն ասիկա հայոյանք մ'էն է յեղափոխական գաղափարին դէմ, որուն աստիճանները հոչակելու փութկոտ ինքնագոյնութիւնը ընելէ շին գաղբիք անոնք. Բայց ո՞վ պիտի խտրեն ասկէ վերջը։»

Սագունին գերիզման կրկնեցին իր ընկերները ու տակաւին իրենց զիականացած ընկերին սեւ ուրուականը աչքերուն առջեւ միշտ կեցած, նոյն յիմեր ձին. իրենց մտամոլոր պլատոյի ժամանակամիջոցին անգուժնոր հնչակեան շարագործը վրայ կը հասնի ու երկու հոգի եւս գնդակահար կը սպաննէ ու ճարահատ անձնասպան կը լլայ ինքը։ Ահա ելլ տեսարան, որ տակնուվրայ կընէ ամբողջ Լուստնի Չարագործին գրպանէն մի քանի գրուածներ ելան, որոնք բացարձակապէս կապացուցանեն «Սօրկի Թանքի» հայ ըլլալը, որու բուն անունը Տիգրան թիրախեան է։ Մանրագինին խուզարկութիւններու վրայ յենլով ոստիկանութիւնը կը յայտարարէ թէ Տ. Թիրախեան յատկապէս Ալֆարիստէն եւ կամ է ոճիւր գործադրելու նպատակաւ։

Մինչև հիմա տակաւին զօրաւոր ու սնիախոս է այն հաւանականութիւնը թէ մամուլին եւ թէ ոստիկանական գննող չըմանին մէջ թէ շարագործը հեղինակն է նաեւ Սագունիի սպանումին։ Ոստիկանութեան պայրոյճը Հայոց հանդէպ սանձաւորն է. քիչեր ցերեկ կը գործէ անխոջ այս խորհրդաւոր սպանութիւններուն որջը գտնելու ու միանգամայն ընդմիջու վերջ մը տալու

դիտանաւ էլ, չը պէտք է կարողանաս ինձ իմ տալիք որոշումից ետ կեցնել։

Ինչպէս որ ես եմ զգում թէ թոյլ եմ և կնոջ սէրը կարող է ինձ ետ կեցնել աւելի խոշոր պարտականութիւնից, որ ես ունիմ զէպի իմ ցեղը, նոյնը և աւելի որոշ կերպով նըղատուում են Շուտեանը, իր ընկերները ու նրանց նման դատող հայերը։

—Յեղճ, ցեղճ, այդ խօսքը իմ գլխի ուղիւն են շարժում, բնդմիջեց Գրիգորովը, կարծես թէ միայն իր ցեղի շահերը պահպանողներ են գաղափարական մարդիկ, Կարծես ոտս ժողովրդի գատին ծառայելով գաղափարական իննել չէ՞ կարելի։

Գաղափարի համար ցեղ չը կայ. գաղափարի համար մարդկութիւնը գոյութիւն ունի. նրա տանջված, հարստահարված, անաւանական գրութեան հասած մասը։

—Իհարկ է իհարկ է, աղաղակեցին ոտսուհիները միարեան, քայտերական նայուածքներով վարձատրելով Գրիգորովին. մենք էլ ենք այդ ասում։

—Մեծ մեծ խօսքերով գործ չի լինի, և մենք մեզ արդարացնել չենք կարող, հեղինակով վրա բերեց Արշակը։ Ոչ ես, ոչ պարոն Գրիգորովը և ոչ Մարկոսովը, եթէ այսպէս շարունակենք ոչ ուսումնական մարդկութեան սի օգուտ կարող ենք բերել։ Ինչպէս ասեցի, մենք թոյլ մարդիկ ենք. մեզնից ընկերային գործիչներ չեն գործա գալիս և ոչ գուք ինքնելու էլ, իբրև մեր կրկնը կրկնք արամադրութիւն չունէք մեզ գործնական գաղափարական գործիչներ տեսնելու։ Դուք միայն անտարբեր մնալով և մեզ արգելք չը հանդիսանալով մեր մէջ կը մեռցնէք մտքի բարձր և ազնիւ թիւղները, սրտի ազնիւ ձգտումները։ Անուշտ չը մո-

ռացաք որ մի քիչ առաջ նատէժտան ինձ ասաց. «Կրկին կարող ես ընկերներիդ աւած խոստումիդ հաւատարիմ մնալ. ես քեզ արգելք չեմ հանդիսանայո, մի րոպէ ընդունենք որ վշտացած կնոջ ցար քացակալում է, և միայն անտարբերութիւնն է թելադրում այդպիսի մի միտք արտայայտել։ Միթէ այդ անտարբերութիւնը իր մէջ դեռ բոլորովին չը մեռած աղնիլ զգացումը մեռցնելու համար չէ արտայայտված։ Այր մարդին գործնական գաղափարական գործնելու համար ոչ թէ իր սիրած կնոջ զէպի գաղափարը ունեցած անտարբերութիւն է պէտք, այլ քաջալերութիւնը։

Եւ այդ ան, որչափ ես ճանաչում եմ հայրի հետ սովորանացող ուսու աղբիւրներին, բացակայում է ձեր մէջ։

Արշակի խօսքերը ծանր քարերի նման ընկան ունկնդիրների սրտերի

վրայ. տիկին Մարութեան, նատէժտան և Գրիգորովի կնոջ շրթունքները կծկելով իրար նայեցին. Մարկոսովը անհանգստացածի պէս սկսեց իր փորը շփել. անգնատան մէջ տիրեց անսխորժ, ճնշող լուրթիւն. Բարեբախդաբար այդ րոպէին գոռը ուժով բանալով ներս վազեց Մարկոսովի 7 տարեկան ոսկեթել մազերով բայց սեւ աչքերով, հարազատ խառնուրդ ոտս և հայ ցիղի աղջիկը՝ Իլիան ու սուսերէն խօսելով բարձրացաւ հօր գիրկը։

—Հայ իկ, ես Մարթամենց տունն էի. նրա հայրն ու մայրը ինձ շատ սիրեցին. շաքարեղէն տւին, եւ երբ Մարթամը չը կարողացաւ իմ խօսքերին պատասխանել, ինձ ասացին որ քեզ խնդրեմ ինձ հայրեն սորվեցնես։ Հայրեն կը սորվեցնես, հա, չէ՞ որ ես հայ եմ, քո աղջիկը. ինչի՞ ինձ հայրեն չես սորվեցնում...

(Շարունակ կեցի)

իրենց հողին վրայ սեզի ունեցած
հայկական վրէժխնդրութիւններու
ընդմեջ:

Բնագրութիւն ոգորումներով ու շա-
հանքերի գիտումներով եղած Միտ-
թեան շարաքառակ արդիւնքն էին
այս ամէնք: Անխուսափելի էր, ուշ
թէ կանուխ, այս վերջնական քայ-
քայու՛մը: Մենք դեռ չը լինցուցինք,
դեռ շատ բաներ պիտի պարզենք
հիմնուելով հնչ. անցուցարձեքուն
մէջ մեր կատարած ուսումնասիրու-
թիւններուն վրայ:

Սաւուդ

Ռուսոճուք 7 Դեկտ. 1903

Մօտ մի շարք է ինչ հնա-
դեմ գաղափարասանական խոմբը
հոս է: Այնպէ՛ք երեկոյ առաջին
անգամ լինելով ներկայացրին,
թուրքերէն լեզուով, «Մի ըն-
տանիքի տասնամեայ կեանքը»
(Ա. Տիւմարց): Եւ մենայն զէպս
«Կազմեցաւ» խոմբը մեզ համար
առայում մի անձանթ հող է:
Ուսումնասիրութիւններ հետզ-
հետէ:

Սիրուկ Ա. ամսան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Պահմանագլխէն Սօֆիա կը տե-
ղեկագրուի, որ Ռուրքիա իլա-
վէր գնդերը կը զինէ և յափշ-
տակելով անոնց կը յատկացնէ
մակեդոնացի թշուառներուն հա-
մար զրկուած զգեստները ու պա-
շարը:

— Զօրավար Պէնտէրէզ, որ
Պաթթէմպէրկի զահնկեցութեան
միջոցին զլխաւոր դաւադիրնե-
րէն մէկն էր, Ռուսիոյ պատե-
րազմական նախարարի արտո-
նութեամբ իր արձակուրդները
Սօֆիա պիտի անցնէ, ինք կը գտ-
նուի սուսական ծառայութեան
մէջ: Ընտրուած է իրեն
պուլկարական ծառայութեան մէջ
մտնել. բայց չէ ընդունած:

Պէնտէրէզ լաւ ծանօթ է Մա-
կեդոնիոյ ռազմական կէտերուն:
Իր Սօֆիա գայուն կը տրուի քա-
ղաքական նշանակութիւն:

— Ռուսասէր Յանքովտաներու
թերթը կը յայտարարէ, որ ռու-
սական լրտես Վայսման արմ կը
գտնուի հիւսիսային Պուլկարի-
ոյ քաղաքներէն միոյն մէջ:
Թերթը կը քննադատէ կառավա-
րութեան թոյլ ընթացքը Վե կը
պահանջէ, որ Վայսման ձերբա-
կալուելով դատի ենթարկուի:

— Պուլկարիոյ ամեն կողմ պաշ-
տօնական յայտարարութիւններ
ցրուած են, ըստ որոնց Պուլկա-
րիոյ մէջ պարոզ բոլոր օտարները
զինուորագրութեան կը հրաւիրուին:

— Պատերազմական պիւտճէն
26 միլիոն ֆր. ի բարձրացած
է, այսինքն վերջացող տարուան
վրայ 3 միլիոն յաւելում մը եղած
է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Տամատ Մահմուտ փաշայի որ-
դին իշխան Լուիթֆուլլահ, իբր
թէ երթասարդ թիւրքերու դե-
կավարը, Պուլիս դարձած ըլլալով
ձերբակալուած ու բանտարկուած
էր: Այժմ Սուլթանը անոր նե-
րում շնորհած է և կը գտնուի
իր Տօրը քով:

Թիւրք յեղափոխականը իհար-
կէ Սուլթանին շնորհներուն ար-
մանանալու կանխամտածութեամբ
Պուլիս վերադարձած էր:

— Տիպեկութիւն ստացած ըլ-
լալով, որ Ռիօի վանքին մէջ
յեղափոխականները ռազմական
պատրաստութիւններ կը տեսնեն
Ի. Դուռը բողոք ներկայացուց
երկու պետութեանց դեսպաննե-
րուն և Սօֆիա:

— Իսկիւ պի մօտ թիւրք զօր-
քեր և մակեդոնական շէթա մը
կուռի բռնուեցան: Մակեդոնա-
ցիներէն ինկան 3 մարդ, գերի
բռնուեցան 6 մարդ, թիւրքերը
ունեցան աւելի մեծ կորուստ-
ներ: Չէթան թիւրք զօրքերու
շղթան ճեղքելով անյայտացաւ:

— Մակեդոնական քննիչ յանձ-
նախուժքի նախագահը Էտիպ փա-
շա Պուլիս վերադարձած է և
յայտնած, որ Ստրիանուպոլսոյ
նահանգին մէջ համամատարար
աւելի քիչ աւերում եղած է,
քան ուրիշ տեղեր:

— Էթիֆիք փաշա Զինովիէֆի
և Ֆոն Գալիչէի եւրոպական հո-
կողութիւնը թուլացնող քանի մը
առաջարկներ ըրաւ, զորս մեր-
ժուեցան դեսպաններու կողմէ:

Դուռը պետութեանց ուշադրու-
թիւնը հրաւիրեց Պուլկարիոյ
սպառազինման վրայ և յայտնեց,
որ իշխանապետութեան այդ ըն-
թացքը կը դժուարացնէ բարե-
նորոգմանց գործը:

ՍԵՐՊԻԱ

Սկուպիանն որոշեց կէս միլիոն
ֆր. յատկացնել Մակեդոնիոյ և
հին Սերպիոյ թշուառներուն և
սովեալներուն:

— Աղէքսանդր թագաւորի դա-
ւադիրներէն Բաբովիչ հրտա-
րած է իր պաշտօնէն և արքունի-
քէն ետ քաշուած՝ թագաւորին
գործելու դիւրութիւններ տալու
համար:

ՍՊԱՆԻԱ

Արքայական երկու կուսակցու-
թիւններու մէջ ծագած անհա-
մաճայնութեանց համար դատա-
ւոր նշանակուած է թագաւորը:
Կուսակցութիւնները իրարու զի-
ջումներ ընելու տրամադրու-
թիւն չունին: Թագաւորը մնա-
ցած է ծանր դրութեան մէջ:

— Պատերազմական և ծովային
նախարարները կը պահանջեն
պիւտճէին վրայ մեծ յաւելումներ:
Նրեմփոխանական խորհուրդը ա-
ռաջարկեց քննութեան ենթար-
կել պիւտճէի վերջին հաշիւնե-
րը:

Ի Տ Ա Լ Ի Ա

Իտալիոյ նախկին նախարարա-
պետը Մանարտելի ծանր հի-
ւանդ է: Հիւսուցում իր մօտ
կանչուած են ծիսակատար եպիս-
կոպոսը և իր քոյրը:

— Իրօֆէսօր Կուպէրնաթիս
Հոովմի մէջ կարգաց իր առա-
ջին դասախօսութիւնը: Մօտ 200
աշակերտ «Պեցցել» և «անկցի-
Աւստրիան» ազգակներով դիմա-
ւորեցին քրօֆէսօրը: Ուսանող-
ները յետոյ վառեցին Աւստրիոյ
Ֆրանց Յոլզէլ կայսեր պատկերը:

— Լեւոն ժի պապի գանձարա-
նէն գտնուած է 40 միլիոնի ա-
հադին հարստութիւն մը: 9 մի-
լիոն ալ գտնուած է իր թանգա-
րանէն: Ըստ հանգուցեալ պապի
ցանկութեան կարտիւնալ Գօթի
բոլորը յանձնած է նոր պապին:

ԶՈՒԹԵՐԻԱ

1904 տարեշրջանի համար
Դաշնակցական ժողովի նախագահ
ընտրուած է Բուպէրիմ Քօնթէս:
Սա երիտասարդ դիւանագէտ մըն
է, որ իր ընդունակութիւննե-
րով շուտով յաջողեցաւ մտնել
Պէրնի ազգային ժողովի մէջ:

Պետական խորհրդի նախագահ
ընտրուեցաւ Լաշըմալ, ազգ. ժո-
ղովին՝ Մարթէն:

ՖՐԱՆՍԱ

Քօմպ սէնաթին ներկայացուց
կրօնական միաբանութիւններու
դաստիարակութեան դէմ պատրաս-
տած օրինագիծը, որ հինգ կէ-
տերէ կը բաղկանայ: Ստով կզե-
րականներէն կառուուի դպրոց-
ներ վարելու իրաւունքը: 5
տարի ժամանակամիջոց տրուած
է միաբանութիւնները լուծելու
և դպրոցները գոցելու: Օրինա-
գիծը ձայներու մեծամասնու-
թեամբ ընդունուած է:

— Մովային նախարարը «Իաթ-
րիա» նոր զրահաւորը հանդիսա-
ւոր կերպով չուրը իջեցուցած
է:

— Սօցիալիստ Միւրման ազգ.
ժողովին մէջ առաջարկեց
վերջնել պատույ լէգէօնի և միւս
բոլոր նշանները: Առաջարկը
ընդունուեցաւ:

ՆԱՅՐԱԳՈՐԵ ԱՐԵՒԵԼԻՔ

Ռուս—ճարտական յարաբե-
րութիւնները նորէն սուր կեր-
պարանք կը ստանան: Ճարտ. կը

պատրաստուի զօրք շրկել Քօ-
րէա, Ռուսական նաւատորմի
մը մեկնած է զէպի շինական
չուրերը:

— Զինաստանի ներքին գա-
ւառները յայտարարած են կա-
ռավարութեան, որ իրենք պատ-
րաստ են զարնելու, երբ Ռու-
սիա գայի երկնային կայսրու-
թեան իրաւունքներուն:

Ա Ի Ս Տ Ի Ա

Կոմս Կօլուխովսքի իր վերջին
ճառին մէջ թուրքիւյ դէմ կը
ծու ահնարկութիւններ ըրաւ:
Ան հասկցնել ուղեց, որ եթէ
Միւրցշղթէկի ծրագիրը անյաջո-
ղութեան մատնուի թուրքիոյ գո-
յութեան կրօնաւնայ վտանգ,
ուրկէ փլկել թերեւս ուշ ըլլայ,
նախարարը եզրակացուց, որ
Դուռը ինք իրեն հաշիւ թող
տայ քանի դեռ շատ ուշ չէ:

Կօլուխովսքի իր ճառին մէջ
յորդոր կարգաց Պուլկարիոյ, որ
հանդարտ մնայ և չօգնէ ապրս-
տամբներուն, հակառակ պարա-
գալիս ինքը իր բաղդին կ ձը-
գուի:

ԿԱՐԵՒ Բ ԱԶԴ

Ճարտորդներու Համար
Նախկին Օթէլ Ռոտօիի և այս
ամառ Հիւսարի մէջ Օթէլ Պուլկարիաի
վարձակալ Աստիկ Սրապիան, այժմ
բացած է պանդոկ մը Ֆիլիպէի Մեծ
փողոցին վրայ:
Օթէլ ՍԱՆԹՐԱԼ
Անուամբ: Յաճախողները գոհ
պիտի մնան մաքրութենէն և արագ
ծառայութենէն:
Տնօրէն
Աստիկ Սրապիան
6 Նոյեմբեր, 1903
Ֆիլիպէ 5—12

ՄԵՐ ԲԱՍԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն կը խն-
դրուի, որ փութացնեն մեզ զը-
կել իրենց բաժնեգիրները և յե-
տամնաց պարտքերը: Պէտք է
գիտնալ որ պարտաճանաչութիւ-
նը առաքինութիւն մըն է:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Կովկասեան Վէրքեր
Հրատարակութիւն 2 Յ. Դաշ-
նակցութեան:
Գինն է 3 ֆրանք:

ՕՏՎՈՐՈՒՆԻՔ

Мурадъ-Браносянъ

Печатница „Взаимность“ Варна